Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.3/[140343]-12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Կ. Ավագյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Սարգսյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Զ. Մնացականյան	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Ա. Քարամյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Ա. Բերբերյան	ՀՀ Նախագահի օգնական
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ

Հրավիրվածներ՝

Վ. Ջիլավյան	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
Մ. Հակոբյան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Թութունջյան	ՀՀ վարչապետի օգնական
Ս. Սարգսյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի խորհրդական
Ա. Տեր-Հովակիմյան	Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ

Մ. Պողոսյան ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ

1. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կառուցվածքը հաստատելու մասին

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կառուցվածքը:

2. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաստիքացուցակը հաստատելու մասին

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաստիքացուցակը:

3. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հատկացվող դրամաշնորհների կարգերը, աշխատանքային ներքին կարգապահական կանոնները և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպվող և աջակցող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման կարգերը հաստատելու մասին

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը: Այդ կապակցությամբ նա տեղեկացրեց, որ ներկայացվող կարգերը տեղադրված են Հայաստան ի երիտասարդական հիմնադրամի կայք-էջում՝ ապահովելու համար հանրությանը հասանելիությունը և հիմնադրամի գործունեության թափանցիկությունը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ՀՀ տարածքում գործող բուհ-երի ուսանողական խորհուրդներին և ուսանողական խորհրդականներին դրամական միջոցների հատկացման կարգը, ՀՀ-ում հիմնադրված հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և կրթօջախ-

ներին մրցույթների անցկացման միջոցով, ինչպես նաև ոչ մրցութային կարգով դրամաշնորհիների հատկացման կարգերը, ՀՀ բուհ-երում անվճար համակարգում չընդգրկված, բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ունեցող առաջին կուրսի ուսանողներին կրթաթոշակների տրամադրման կարգը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպվող և աջակցող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման կարգը և հիմնադրամի աշխատանքային ներքին կարգապահական կանոնները:

4. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2012 թվականի բյուջեի նախագիծը հաստատելու մասին

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը: Այդ կապակցությամբ նշեց, որ 25 տոկոսը բաժին է ընկնում վարչական և պահպանման ծախսերին, իսկ մնացածը բաշխված է ըստ ծրագրերի և հետևյալ 6 ուղղությունների՝

1) կրթություն, գիտություն.

2) առողջ ապրելակերպ.

3) սոցիալ-տնտեսական զբաղվածություն.

4) հոգևոր, հայրենասիրական, մշակութային դաստիարակություն.

5) միջազգային և համահայկական.

6) միջազգային:

Ընդհանուր ծրագրային մասի հանրագումարը կազմում է 640.0 մլն դրամ:

Այնուհետև նա առաջարկեց քննարկել 2013 թվականին «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի շարունակականության հարցը՝ միաժամանակ չբացառելով միջոցառման ձևաչափի որոշակի փոփոխությունը:

ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Կ. Ավագյանը տեղեկացրեց, որ՝

1) ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ սփյուռքի նախարարության ներկայացուցիչների հետ համատեղ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել է սիրիահայ ուսանողների կրթաթոշակների փոխհատուցման հարցը: Արդյունքում առաջարկվում է, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կրթական ծրագրի համար նախատեսված գումարից բացի նախատեսել նաև միջոցներ՝ սիրիահայ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրելու համար: Ընդ որում, տվյալ առաջարկի ֆինանսավորման ճշգրտված չափը գրավոր կներկայացվի ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

2) վերանայվել է նաև սոցիալական խոցելի խմբերին՝ հաշմանդամներին, ծնողածուրկ երեխաներին և այլն, աջակցող ծրագիրը, որի արդյունքում ընդլանվելու են շրջանակները:

ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանը տեղեկացրեց, որ՝

1) «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի շարունակականության վերաբերյալ ստացվում են բազմաթիվ հայտեր.

2) 2013 թվականի հունվար ամսին նախատեսվում է կազմակերպել «Ձմեռային Բազե» համահայկական երիտասարդական հավաք՝ Հայաստանի կենտրոնական, հյուսիսային և հարավային շրջաններում:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը տեղեկացրեց, որ Հայաստանի երիտասարդական հիմնադրամից բացի, կրթաթոշակների ծրագիր է իրականացվում նաև ՀՀ պետական բյուջեի ֆինանսական միջոցների հաշվին: Սակայն հիմնադրամի կրթաթոշակների ծրագրի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ սոցիալապես անապահով կամ առաջադիմության բարձր ցուցանիշներ ունեցող ուսանողները ընտրվում են ուսանողական խորհուրդների կողմից՝ որոշակի չափորոշիչների հիման վրա, որից հետո ներկայացվում են թեկնածություններ՝ հիմնադրամի ծրագրի շրջանակում աջակցություն ստանալու համար:

Բացի այդ՝ առանձնակի կարևորվեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործունեության թափանցիկության և իրականացվող ծրագրերի հասանելիության ապահովումը: Այսինքն, որ յուրաքանչյուր երիտասարդական կազմակերպության, ուսանողի համար հասանելի և հասկանալի լինեն հիմնադրամի շահառու դառնալու կարգն ու պայմանները:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2012 թվականի բյուջեի նախագիծը.

2) հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝

ա. նիստի ավարտից անմիջապես հետո ՁԼՄ-ների ներկայացուցիչներին մանրամասն ներկայացնել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից իրականացվող ամենահիմնական, ուսանողության կողմից ամենագնահատելի և ուշագրավ ծրագրերը, մասնավորապես՝

- Սոցիալապես անապահով ուսանողների աջակցության՝ կրթաթոշակի 60.0 մլն դրամ արժողությամբ ծրագիրը, որը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է նախապես սահմանված չափանիշների հիման վրա.

- Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կրթական ծրագրի ներքո կարիքավոր սիրիահայ ուսանողներին կրթաթոշակներ տրմադրելու առաջարկը,

- սոցիալական խոցելի խմբերին պատկանող ուսանողների համար նախատեսված ծրագրի ընդլայնման մասին,

բ. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործունեության թափանցիկության և իրականացվող ծրագրերի հասանելիությունն ապահովելու նպատակով Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կայք-էջում տեղադրել բոլոր ծրագրերը, դրանց հետ առնչվող կարգերը,

գ. «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի արդյունավետության և 2013 թվականին դրա շարունակականության նպատակահարմարության վերաբերյալ երիտասարդական կազմակերպությունների շրջանում անցկացնել հարցում, ստանալ նրանց գրավոր հիմնավորումներն ու հայտերը և ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

5. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2012 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող ընկերության ընտրության մասին

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և նշեց,որ աուդիտորական ընկերություններին հարցման եղանակով ներկայացվել են առաջարկներ, որի արդյունքում գնային առաջարկ ստացվել է հետևյալ 3 ընկերություններից՝

1) «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ՝ 3.2 մլն դրամ.

2) «Երևան Աուդիտ Կոնսալթ» ՓԲԸ՝ 1.2 մլն դրամ.

3) «Աուդիտ Սըփորթ Արմենիա» ՓԲԸ՝ 840.0 հազ. Դրամ:

Գնային առաջարկ ներկայացնելուց հրաժարվել են «Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ-ն և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն:

Ընդ որում, նա տեղեկացրեց, որ նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է «Աուդիտ Սըփորթ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից:

ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանն առաջարկեց որպեսզի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի բյուջեի ծախսային և եկամտային կանխատեսումները կատարվեն իրատեսական ցուցանիշների հիման վրա (օրինակ՝ մոտավորապես 300.0 մլն դրամի շրջանակներում):

Քննարկումներից հետո որոշվեց՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2012 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պատվիրել «Աուդիտ Սըփորթ Արմենիա» ՓԲԸ-ին:

6. Այլ հարցեր

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 6-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և հիշատակեց հիմնադրամի կանոնադրության 1.5-րդ կետի հստակեցման վերաբերյալ հանձնարարականը, ըստ որի հիմնադրամի շահառու պետք է համարվեն երիտասարդները և երիտասարդական կազմակերպություն-ները: Այդ կապակցությամբ առաջարկեց կատարել փոփոխություն կանոնադրության 1.5-րդ կետում:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նպատակահարմար չհամարեց, որպեսզի հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հանդիսանա հիմնադրամի շահառու:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կանոնադրության 1.5դդ կետում մեջ կատարել փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ	ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ	ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ	ԿԱՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ԶՈՀՐԱԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ԱՐՍԵՆ ՔԱՐԱՄՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՕԳՆԱԿԱՆ	ԱՎԵՏԻՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ	ԱՍՏՂԻԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 նոյեմբերի 2012 թվականի N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հիմնադրամի կանոնադրության 4.7.17 կետով՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կառուցվածքը (կցվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 նոյեմբերի 2012 թվականի N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հիմնադրամի կանոնադրության 4.7.18 կետով՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաստիքացուցակը (կցվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 նոյեմբերի 2012 թվականի N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հիմնադրամի կանոնադրության 4.7.20 կետով՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հատկացվող դրամաշնորհների կարգերը, աշխատանքային ներքին կարգապահական կանոնները և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպվող և աջակցող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման կարգերը (կցվում են):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 նոյեմբերի 2012 թվականի N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հիմնադրամի կանոնադրության 4.7.3 կետով՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2012 թվականի բյուջեն (կցվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 նոյեմբերի 2012 թվականի N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հիմնադրամի կանոնադրության 4.7.16 կետով՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2012 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձ (աուդիտոր) ընտրել «Աուդիտ Սըփորթ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 նոյեմբերի 2012 թվականի N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 1 ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 16-Ի N 3 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հիմնադրամի կանոնադրության 4.7.11 կետով՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2010 թվականի հունիսի 9-ի N 1 որոշմամբ հաստատված կանոնադրության 3.5 կետից հանել <<(այդ թվում՝ Հիմնադրամի հիմնադիրը)>> բառերը:

2. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2012 թվականի մայիսի 16-ի N 3 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը ճանաչել չեղյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ